Արամ Մնացականյան Շահենի/2602740446/Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

2026-11-02 12:15:09

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված

ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժի կողմից տրված թիվ ՖԱ/2500/26 կատարողական թերթի հիման վրա Հարկադիր կատարման ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնում հարուցվել է թիվ 15046856 կատարողական վարույթը, որի համաձայն պետք է Արամ Շահենի Մնացականյանից հօգուտ ԱյԴի Բանկ-ի բռնագանձել 690,818.70 ՀՀ դրամ գումար, հաշվեգրվող տոկոսներ ինչպես նաև «Կատարողական վարույթի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կայուն կատարողական վճար՝ 5.000 դրամ և նույն հոդվածով սահմանված կատարողական ծախս: Կատարողական վարույթի շրջանակում արգելանք է դրվել պարտապան Արամ Մնացականյանին սեփականության իրավունքով պատկանող «TOYOTA CAMRY 2.5» մակնիշի, 36 QZ 842 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վրա, որը ենթակա է հարկադիր իրացման:
Տեղեկացնում ենք, որ «Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 1-րդ մասի համաձայն՝
1. Արգելադրված գույքի իրացման նպատակով դրա շուկայական արժեքը որոշում է հարկադիր կատարողը՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է որոշել բաց աղբյուրների միջոցով:

Գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու գնահատված արժեքի (3.723.347 դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 2.978.677 դրամ:

Հիմք ընդունելով «Կատարողական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝

5. Ընդհանուր սեփականությունում պարտապանի բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեցող այլ մասնակցի միջնորդությամբ հարկադիր կատարողը մեկ անգամ մինչև մեկ ամիս ժամկետով հետաձգում է ընդհանուր գույքի առաջիկա (ոչ ընթացիկ) աճուրդը (կրկնաճուրդը) պարտապանի բաժինն

ընդհանուր սեփականության այդ մասնակցին վաճառելու նպատակով, եթե միջնորդություն ներկայացրած անձը պարտապանի բաժնի՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշված շուկայական արժեքի երեք տոկոսի չափով գումար է վճարում Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին (900013288031)։

6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջնորդություն ներկայացրած անձն ընդհանուր գույքի աճուրդի հետաձգման ժամկետի ընթացքում Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին է վճարում պարտապանի բաժնի շուկայական արժեքի մնացած մասը, ապա հարկադիր կատարողն այդ անձի հետ կնքում է պարտապանի բաժնի առուվաճառքի պայմանագիր։ Եթե պարտապանի բաժինը գնելու նախապատվության իրավունքից սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով օգտվում են մեկից ավելի անձինք, ապա պարտապանի բաժինն այդ անձանց վաճառվում է ընդհանուր գույքում նրանց ունեցած բաժինների չափերին համամասնորեն։

37460713433

harkadir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա